ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ: (00 37410) 511-785, Ֆաքս: (00374 10) 511771

№ ԴԴ -3- Ն-190

«17» հունվարի 2019թ.

«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Մանուկյանին

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար դատական ավտոմատացված համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. հունվարի 17-ի թիվ 3 որոշմամբ «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ն հայտարարվել է ընտրված մասնակից:

Հիշյալ ընթացակարգի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ:

Տեղեկացվում է, որ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/02» ծածկագրով պայմանագրի նախագիծը տրամադրվել է համակարգի միջոցով: Առաջարկվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/02» ծածկագրով հրավերի 1-ին մասի 8-րդ և 9-րդ կետերով սահմանված կարգով ներկայացնել այն, միաժամանակ ներկայացնել նաև պայմանագրի ապահովման (Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը) բնօրինակը՝ պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ՝ Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի («ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևին /Հավելված 6/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին):

Վերոնշյալ ժամկետում պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի ապահովումը պատվիրատուին չներկայացնելու դեպքում՝ մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

ՆԱՐԵԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/02» ծածկագրով
գնումը համակարգող՝ Դ. Թովմասյան
Հեռ.՝ 511-787